ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի ելույթը Թաթուլ գյուղում կայացած՝ զոհված ազատամարտիկ Սամվել Կարապետյանի ծննդյան 50 ամյակին նվիրված միջոցառման ժամանակ

Հպարտության զգացումով եմ ելույթ ունենում, քանզի Հայաստանի Հանրապետության 15 Ազգային Հերոսներից 2-ը՝ Գեղազնիկ Միքայելյանը և Թաթուլ Կրպեյանը, Արագածոտնի մարզից են: Նրանցից իրենց քաջությամբ ու հերոսությամբ քիչ են տարբերվում այստեղ՝ իրենց հայրենի հողում հանգչող Սամվել Կարապետյանն ու Արթուր Բաղդասարյանը: Այս հուշահամալիրում ննջող 3 հերոսներն էլ Հայ հեղափոխական դաշնակցության անդամներ են եղել, ովքեր երդվել են հայրենիքի ազատության համար պայքարի զոհասեղանին դնել ամենաթանկը՝ իրենց կյանքը… ԵՎ այդպես էլ եղավ:

Այսօր Թաթուլ գյուղը, ինչու չէ, նաև՝ Արագածոտնի մարզը, մեծ հպարտությամբ ու հերոսի առջև խորին խոնարհումով նշում է Սամվել Կարապետյանի ծննդյան 50-ամյա հոբելյանը:

Սամվել Կարապետյանը Արցախյան պատերազմի հենց առաջին օրերից մարտադաշտում էր և իր զինակիցների հետ պայքարեց հանուն հայրենի հողի ազատագրության՝ քաջ գիտակցելով, որ դեպի պատմական հայրենիք տանող ճանապարհն անցնում է Արցախով:

Ապրիլյան քառօրյա հայրենական պատերազմը վերստին ապացուցեց, որ ոչ միայն Գեղազնիկ Միքայելյանի, Թաթուլ Կրպեյանի, Սամվել Կարապետյանի և Արթուր Բաղդասարյանի, այլ Արցախյան բոլոր ազատամարտիկների հերոսական ոգին փոխանցվել է նոր սերնդին, ովքեր ոչ պակաս խիզախությամբ անառիկ պահեցին ազատագարված Արցախի հերոսական հողը:

Շնորհավորելով Սամվել Կարապետյանի ծննդյան 50 ամյակը՝ ես իմ երախտիքի խոսքն եմ ուղղում հերոսի ծնողներին, հարազատներին, ընկերներին և Թաթուլ գյուղի ողջ հասարակությանը:

Շնորհավոր ծնունդդ, սիրելի Սամվել: